ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

06.12.2017թ. | ժամը 11:00-13:30 | «Իբիս» հյուրանոց, Երևան

Մասնակիցներ՝ **Բազմաշահառու խմբի անդամներ**

Նախագահող՝	Դավիթ Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարար
	Վարդան Գևորգյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
	Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
	Կարեն Իսախանյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
	Խաչիկ Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
	Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով ավագ կառավարիչ
	Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
	Արթուր Համբարձումյան (ԲՇԽ ժամանակավոր անդամ)	«Հասարակական ձայն» («ՍիվիլՎոյս») հասարակական կազմակերպության խորհրդի անդամ
	Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
	Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ, Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ
	Արթուր Գրիգորյան	«Էկոիրավունք» հասարակական կազմակերպության նախագահ
Ներկաներ՝ տեսակապի միջոցով	Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի խորհրդական

ՀՀ կառավարության աշխատակազմ

	Լիլիա Շուշանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ղեկավար
	Լուսինե Թովմասյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ
	Դավիթ Շինդյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ
Հյուրեր՝	Դեբորա Գրիզեր	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (ՄԶԳ)
	Անահիտ Խաչատրյան	ԱՄՆ ՄԶԳ
	Դմիտրի Մարիասին	ՄԱԿ–ի զարգացման ծրագիր
	Արմեն Մարտիրոսյան	ՄԱԿ–ի զարգացման ծրագիր
	Փույա Նոշադի	Գերմանական միջազգային համագործակցություն
	Լիլիթ Մուրադյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կետրոն (ՀԱՀ ՊՀԿ)
	Կառլ Ուլբրիխտ	ՀԱՀ ՊՀԿ
	Դավիթ Հակոբյան	ՀԱՀ ՊՀԿ
	Նարինե Թադևոսյան	Համաշխարհային բանկի գրասենյակ
	Կարեն Զադոյան	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
	Մարատ Ատոմյան	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
	Մարիամ Զադոյան	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
	Դավիթ Սարգսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ)
Բացականեր՝	Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
	Պերճ Խաչատրյան	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական դեպարտամենտի

	ղեկավար
Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն

Արձանագրող-ներ՝ Լուսինե Թովմասյան
Դավիթ Շինդյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ

1. ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ-ի) նիստի բացում

Դ. Հարությունյանը ողջունեց նիստի մասնակիցներին և նշեց, որ ԲՇԽ-ի պաշտոնական նիստը կազմակերպվեց նախատեսվածից ուշ, քանի որ նախքան նիստը իրականացվել են մի քանի աշխատանքային հանդիպումներ, որոնց միջոցով կարևոր համաձայնություններ են ձեռք բերվել՝ առաջնահերթ աշխատանքները կազմակերպելու տեսանկյունից: Սա անհրաժեշտ էր հատկապես այն պատճառով, որ ԲՇԽ-ին ներկայացված նախնական ուսումնասիրության առաջին նախագծում շատ հարցեր էին բաց մնացել, իսկ ժամանակը բավական սուղ էր: Դեռևս չի ներկայացվել նախնական ուսումնասիրության լրամշակված նախագիծը: Այդ հանդիպումները հնարավորություն տվեցին քննարկել նիստի օրակարգում ներառված աշխատանքների արդյունքները: Մասնավորապես.

- Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ներդրման գործընթացը կարգավորող և հաշվետվողականության մեխանիզմը պարտադիր նորմ սահմանող օրենքների նախագծերի փաթեթը,
- ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքի տեխնիկական առաջադրանքի նախագիծը,
- Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի և «իրական սեփականատեր» հասկացության սահմանման նախագծերը,
- ԱՃԹՆ-ի բաց տվյալների քաղաքականության հայեցակարգը, ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունը և մի շարք այլ հարցեր:

Դ. Հարությունյանը ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը և առաջարկեց անցնել դրանց քննարկմանը: Նշվեց, որ ավարտվում է ՀՀ կառավարության և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության համատեղ «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության

բարելավում» ծրագիրը, և, ամփոփելով կատարված աշխատանքները, ծրագրի իրականացումը կարելի է համարել շատ հաջողված: Որպես ծրագրի արդյունք արդեն իսկ գործում է Հանրապետական երկրաբանական ֆոնդի www.geo-fund.am կայքը, որի միջոցով յուրաքանչյուրին հասանելի է ֆոնդի պահոցում պահպանվող ամբողջությամբ թվայնացված տեղեկատվությունը, ինչն այսօր էլ շարունակում է համալրվել Երկրաբանական ինստիտուտի արխիվի թվայնացվող նյութերով: Կայքն ունի բավականաչափ շատ այցելուներ, որոնց թիվը շարունակում է աճել: Ինչ վերաբերում է Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների իրականացմանը՝ ծրագրի օգնությամբ հաջողվեց իրականացնել ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի ներկայացման համար պահանջվող պարտադիր նախապատրաստական քայլերը, ներկայացնել Հայաստանի հայտը և 2017թ. մարտին ԱՃԹՆ-ի խորհրդի կողմից ճանաչվել թեկնածու երկիր: Դ. Հարությունյանի կողմից հատուկ շնորհակալություն հայտնեց Լ. Շուշանյանին, ով հանդիսանում է գործընթացի շարժիչ ուժը: ՀՀ կառավարության, և Հայաստանի ԲՇԽ-ի անունից շնորհակալության խոսքեր փոխանցվեցին ԱՄՆ ՄԶԳ-ին:

Հայտարարվեց նաև, որ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը պատրաստակամություն է հայտնել միանալու ԱՃԹՆ-ի գործընթացն աջակցողների թիմին և ֆինանսավորելու Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական պորտալի ստեղծման աշխատանքները: Նախատեսվում է, որ Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքը դառնալու է այն հարթակը, որում EITI-ի սկզբունքների և պահանջներին համապատասխան՝ հրապարակվելու է Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության և Հայաստանի ազգային զեկույցով ներկայացվող համապարփակ տեղեկատվությունը, ինչպես նաև ստեղծվելու է ԱՃԹՆ-ի զեկույցի համար հանքարդյունաբերող ընկերությունների և պետական մարմինների կողմից հաշվետվությունների ներկայացման առցանց համակարգ: Կայքը նաև հնարավորություն կտա օպերատիվ դարձնել հաշվետվությունների ներկայացումը և կունենա ցանկացած հաշվետվությունների ու տվյալների հետագծի (traceability) հնարավորություն: Կայքում ներկայացվող տեղեկատվությունը համապատասխանելու է բաց տվյալների սկզունքներին:

Նշվեց, որ հանդիպմանը ներկա են ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան գրասենյակի տնօրեն Դեբորա Գրիզերը և Հայաստանում ՄԱԿ–ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի մշտական համակարգողի տեղակալ Դմիտրի Մարիասինը, որոնց էլ փոխանցվեց խոսքը:

2. Հյուրերի ողջույնի խոսք

Դ. Գրիզերը ողջունեց ԲՇԽ-ի անդամներին և հյուրերին՝ նշելով, որ ԱՃԹՆ-ի գործընթացը Հայաստանում վերջին մեկ տարում բավականաչափ առաջ է անցել. Հայաստանն այժմ թեկնածու երկիր է: Նշվեց, որ կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը և բիզնեսը միավորել են իրենց ջանքերը ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին համապատասխանելու համար: Հայտարարվեց, որ ԱՄՆ ՄԶԳ և կառավարության աշխատակազմի հետ համատեղ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագիրը 2017թ. դեկտեմբերին կավարտվի: Համագործակցությունը գնահատվեց որպես շատ հաջող. մեծ առաջընթաց է արձանագրվել հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության հարցերին անդրադառնալու առումով: Հայտարարվեց, որ ԱՄՆ կառավարությունը կշարունակի աջակցել Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացին՝ քաղաքացիական հասարակության աջակցության ծրագրի միջոցով՝ հզորացնելով քաղաքացիական հասարակության դերը ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացում և նպաստելով հանքարդյունաբերության ոլորտի ու ԱՃԹՆ-ի ավելի լավ լուսաբանմանը լրատվամիջոցների կողմից:

Դ. Մարիասինը նշեց, որ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը ամբողջ աշխարհում սերտորեն համագործակցում է ԱՃԹՆ-ի հետ: Հայաստանում մինչև այժմ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը ուղղակիորեն ներգրավված չի եղել ԱՃԹՆ-ի գործընացում, թեև ԱՃԹՆ-ի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել ՀԱՀ ՊՀԿ-ին 2015-ին, որոշակի աշխատանք է տարվել՝ Սյունիքում ռիսկերի պրոֆիլավորման հետ կապված (Աղետների ռիսկերի նվազեցման ԵՄ կողմից ֆինանսավորվող աշխատանքների շրջանակներում): Հայտարարվեց, որ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը կֆինանսավորի Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի ստեղծման աշխատանքները, և հույս հայտվեց, որ համագործակցությունը երկարաժամկետ կլինի: Նշվեց, որ կայքի տեխնիկական առաջադրանքը մշակված է, և շուտով կհայտարարվի կայքի ստեղծման մրցույթը:

Դ. Հարությունյանն առաջարկեց անցնել նիստի օրակարգի հաջորդ կետերին:

3. ԱՃԹՆ-ի ներդրման շրջանակներում առաջարկվող օրենսդրական փոփոխությունների նախագծի ներկայացում և հաստատում

Վ. Գևորգյանը հակիրճ ներկայացրեց օրենսդրական նախագծերի փաթեթը, որով փոփոխություններ են առաջարկվում «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում», «ՀՀ հարկային օրենսգրքում» և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում: Նախագիծը նախապես տրամադրվել էր ԲՇԽ-ի անդամներին կարծիքների համար: Նշվեց, որ նախագծի շուրջ բազմաթիվ աշխատանքային քննարկումներ են տեղի ունեցել՝ ԲՇԽ-ի, շահագրգիռ գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային գործընկերների մասնակցությամբ:

Հայտնվեց, որ փոփոխությունները կատարվել են՝ ելնելով Հայաստանի՝ ԱՃԹՆ-ի անդամակցության պահանջներից: Մասնավորապես, ԱՃԹՆ-ի անդամակցող երկրները պարտավորվում են հրապարակել ամենամյա զեկույցներ, որոնք պարունակում են համապարփակ տեղեկություն՝ պետության կողմից տրված ընդերքօգտագործման թույլտվությունների, հանքարդյունաբերական ընկերությունների արդյունահանման ծավալների, նրանց վճարված հարկերի և վճարների, ոլորտից ստացված եկամուտների տեղաբաշխման, ինչպես նաև սոցիալական ծրագրերի իրականացման վերաբերյալ: Նշվեց, որ նախագիծը գտնվում է քննարկման փուլում, և դեռևս առկա է փոփոխություններ կատարելու հնարավորություն:

Նկատառում արվեց այն մասին, որ ներկայացված օրենսդրական փոփոխությունների փաթեթը ԱՃԹՆ-ի ներդրման շրջանակներում պահանջվող օրենսդրական փոխոխությունների սպառիչ փաթեթ չէ: Նշվեց, որ փաթեթը խիստ մասնակի է, և չի ծածկում ԱՃԹՆ-ի ստանդարտի ու ստանդարտի համաձայն մշակված աշխատանքային ծրագրով նախատեսվող հնարավոր օրենսդրական փոփոխությունները: Հայտարարվեց նաև, որ բաց է մնում պատախանատու հանքարդյունաբերությաուն մասը, քանի որ առաջարկվող փոփոխությունները չեն ենթադրում ամբողջական ծավալ, և դեռ մեծ ծավալի աշխատանք կա կատարելու:

Դ. Հարությունյանը համաձայնվեց նկատառման հետ՝ նշելով, որ ծանոթ չէ որևէ օրեսնդրության, որը գալիս է կարծրացած և չի ենթադրում հետագայում փոփոխություններ, լրամշակումներ: Այլ օրենսդրական

մշակումների հետ կապված՝ նշվեց, որ ԲՇԽ-ի անդամներից յուրաքանչյուրն ազատ է ներկայացնել առաջարկություններ, որոնք կարող են խմբի քննարկման առարկա դառնալ:

Հարց բարձրացվեց, թե արդյոք օրենսդրական փոփոխությունների նախագիծը կհայտնվի www.edraft.am կայքում, ինչին ի պատասխան նշվեց, որ նախագիծն արդեն իսկ առկա է նշված կայքում:

Հարց բարձրացրեց՝ պայմանագրերի հրապարակման շրջանակներում արդյոք հրապարակվելու են միայն ընդերքօգտագործման պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը: Հարցին պատասխանելով՝ **Վ. Գևորգյանը** նշեց, որ հրապարակվելու է պայմանագիրն ամբողջությամբ՝ ներառյալ հավելվածները:

ԱՃԹՆ-ի ներդրման շրջանակներում առաջարկվող օրենսդրական փոփոխությունների նախագիծը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

4. ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքի տեխնիկական առաջադրանքի ներկայացում և հաստատում

Դ. Շինդյանը ներկայացրեց ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքի տեխնիկական առաջադրանքի նախագիծը, որը նախապես տրամադրվել էր ԲՇԽ-ւի անդամներին կարծիքների տրամադրման համար: Նշվեց, որ ստացված կարծիքները ամփոփվել և ներառվել են նախագծի մեջ: Նշվեց, որ կայքը պետք է ապահովի առավելագույն համապատասխանելիություն գոյություն ունեցող հիմնական որոնման ծրագրային փաթեթների հետ, ինչպիսիք են Internet Explorer, Mozilla Firefox, Opera, Safari, Chrome և այլն: Կայքը պետք է լինի եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն), ինչպես նաև կայքի ցանկացած էջի ներքևում պետք է տեղադրվի հատուկ մոդուլ, որը հնարավորություն կտա տարածել տրված էջը սոցիալական ցանցերում (Facebook, Twitter, Live Journal, GOXI, Youtube և այլն): Ներկայացվեց նաև կայքի մոտավոր կառուցվածքը՝ ԱՃԹՆ-ի մասին (ինչ է ԱՃԹՆ-ը, նախաձեռնությանը միանալու օգուտները, ԱՃԹՆ-ի սկզբունքները), ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացը, ԱՃԹՆ-ի փաստաթղթերը (աշխատանքային ծրագրեր և ուսումնասիրություններ), ԲՇԽ-ի մասին: Կայքում կլինի նաև մեդիա կենտրոն, որտեղ կտեղադրվեն ԱՃԹՆ-ին վերաբերող նորությունները, լուսանկարները և հոլովակները: Կայքը կունենա նաև ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ներկայացման առցանց

հարթակ, որը նախատեսված կլինի ինչպես հանքարդյունաբերական ընկերությունների, այնպես էլ պետական մարմինների համար:

Հարց բարձրացվեց՝ արդյոք կայքը նախատեսում է հանքարդյունաբերությանն առնչվող խնդիրների լուսաբանում՝ ֆորումի տեսքով:

Նշվեց, որ կայքի նպատակը ԱՃԹՆ-ին վերաբերող հաշվետվությունները և հանքարդյունաբերությանը վերաբերող բուն գործընթացներն են, և կայքը պետք է միտված լինի նյութերը հեշտությամբ հայթհայթելուն:

Նշվեց նաև, որ բաց տվյալների քաղաքականության շրջանակում տվյալները պետք է հնարավորինս մատչելի լինեն օգտագործողի համար, որը նաև ենթադրում է հետադարձ կապի (feedback) ապահովում օգտագործողի հետ: Կայքի հետադարձ կապի պատասխանատուն ոչ միայն ԱՃԹՆ-ի քարտուղարությունը կլինի, այլև ԲՇԽ-ի անդամները:

Հարց բարձրացվեց, թե արդյոք բոլոր հաշվետվությունները առանց գրաքննության տեղադրվելու են կայքում, թե քարտուղարությունը ֆիլտրելու է. խոսքը վերաբերում է դրսի կազմակերպությունների կողմից արված ուսումնասիրություններին: **Լ. Թովմասյանը** պատասխանեց, որ քարտուղարությունը հաշվետվությունները ֆիլտրելու իրավասություն չունի, և դրսի կազմակերպությունների կողմից մշակված հաշվետվությունները կայքում տեղադրելու վերաբերյալ որոշումը ԲՇԽ-ն պետք է կայացնի:

ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքի տեխնիկական առաջադրանքի նախագիծը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով): Դ. Հարությունյանը խնդրեց, որ կայքի դիզայնի առաջին տարբերակը ունենալուց հետո դա ներկայացնել ԲՇԽ-ին:

5. ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 3-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և հաստատում

Լ. Շուշանյանի կողմից ներկայացվեց ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2017 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվության նախագիծը, որը նախապես տրամադրվել էր ԲՇԽ-ի անդամներին կարծիքների տրամադրման համար: Եռամսյակային հաշվետվության մեջ զետեղված են 2017 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին իրականացված աշխատանքները՝ համաձայն ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրով հաստատված միջոցառումների: Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային ծրագրով սահմանված մի շարք աշխատանքներ են իրականացվել, մասնավորապես, որոշակի

աշխատանքներ են կատարվել 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության, օրենսդրական վերլուծության, հանրային ռազմավարության նախագծերի մշակման ուղղությամբ: Նշված փաստաթղթերի մշակումը պատվիրակվել է ՀԱՀ ՊՀԿ-ին (ՄԹ դեսպանատան կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում): Մշակվել է նաև իրական սեփականատերերի բացահայտման և օրենսդրական ուսումնասիրության իրականացման նպատակով փորձագետների ներգրավման տեխնիկական առաջադրանքը (ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում): Համաշխարհային բանկից ֆինանսավորում ստանալու նպատակով մշակվել է հայտադիմում և ներկայացվել է Համաշխարհային բանկ: Տեղի է ունեցել Հանրապետական երկրաբանական ֆոնդի կայքի շնորհանդեսը: «Հրապարակում» հաղորդաշարի 2 հաղորդում հեռարձակվել Հանրային հեռուստաընկերության եթերում: ԱՃԹՆ-ի գործընթացը լուսաբանելու նպատակով հոլովակներ պատրաստելու նպատակով մրցույթ է անցկացվել, և ընտրվել է «Ալտերա» ընկերությունը: ԱՃԹՆ-ի քարտուղարության և անդամավճարի ֆինանսավորման նպատակով 2018թ. բյուջետային հայտ է մշակվել:

Առաջարկվեց, որ մշակվի եռամսյակային հաշվետվության նոր ձևաչափ: Նշվեց, որ ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագիրն ավելի լայն է, քան ԱՃԹՆ-ի ստանդարտը, և հաշվետվությունը պետք է կազմված լինի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրում ամրագրված գործողություններից՝ նշելով, թե որքանով են իրականացվել գործողությունները:

Հարցին ի պատասխան՝ հայտարարվեց, որ հաշվետվությունները կազմվում են՝ համաձայն աշխատանքային ծրագրի կետերի: Տվյալ ժամանակահատվածում ձեռքբերված բոլոր արդյունքները ներառվում են հաշվետվության մեջ: Հաշվետվության ձևաչափի մասով առաջարկվեց նոր ձևաչափ մշակել և ներկայացնել ԱՃԹՆ-ի քարտուղարությանը: Նշվեց, որ տարեկան հաշվետվությունը պատրաստելու ժամանակ յուրաքանչյուր խմբակցություն պետք է ներկայացնի իր խմբակցության կատարած աշխատանքը:

Նշվեց, որ համաձայն մինչ այդ գոյություն ունեցող գործելաոճի՝ ԲՇԽ-ի հանդիպումները կազմակերպում է ԱՃԹՆ-ի քարտուղարությունը, սակայն ինքը պատասրաստվում է կազմակերպել պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի հանդիպում:

Առաջարկվեց, եռամսյակային հաշվետվության մեջ նշել հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված միջոցառումների չիրականացման պատճառները:

Նշվեց, որ գործողությունների կատարման և կատարված աշխատանքների որակի հետ կապված խնդիրներ չկան:

Որոշվեց, որ երկու շաբաթվա ընթացքում (մինչև դեկտեմբերի 20-ը) եռամսյակային հաշվետվության ձևաչափի վերաբերյալ առաջարկություններ պետք է արվեն և շրջանառվեն ԲՇԽ-ի անդամների միջև, ինչպես նաև մինչև դեկտեմբերի 20-ը յուրաքանչյուր խմբակցություն ներկայացնի իր կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Հարց բարձրացվեց, թե արդյոք հնարավոր է մինչև տարեվերջ կազմակերպել ևս մեկ հանդիպում՝ եռամսյակային հաշվետվության խնդիրների պարզաբանման նպատակով: **Որոշվեց,** որ եռամսյակային հաշվետվության նոր ձևաչափի (ձևաչափերի) շրջանառումից հետո, կախված քննարկման նյութի առկայությունից, որոշվի՝ ձևաչափը հաստատել էլեկտրոնային եղանակով կամ կազմակերպել ԲՇԽ-ի հանդիպում: Խմբակցության հաշվետվությունները ներկայացվելու են քաղաքացիական հասարակության խմբակցությունից՝ Հ. Մովսիսյանը, ընկերությունների խմբակցությունից՝ Վ. Վարդանյանը և կառավարության խմբակցությունից՝ Վ. Գևորգյանը:

ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների՝ 2017 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվության նախագիծը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

6. ԱՃԹՆ-ի բաց տվյալների քաղաքականության հայեցակարգի ներկայացում և հաստատում

Լ. Թովմասյանը ներկայացրեց ԱՃԹՆ-ի բաց տվյալների քաղաքականության հայեցակարգի նախագիծը: Համաձայն հայեցակարգի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն սահմանում է Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակում բաց տվյալների սկզբունքի իրականացման սկզբունքները և հայտնում իր հանձնառությունը հետևողական լինելու դրանց իրականացմանը: Սկզբունքի կիրառումը դիտարկվում է ԱՃԹՆ-ի տարեկան զեկույցների հրապարակմանը զուգընթաց, և ԱՃԹՆ-ի շրջանակներում հաշվետու կազմակերպություններին չի պարտավորեցնում կիրառել այն, սակայն, տվյալներ հրապարակելիս, ԱՃԹՆ-ի շահագրգիռ կողմերը խրախուսվում են առաջնորդվել բաց տվյալների սկզբունքով: Հայեցակարգը նախատեսում է նաև, որ ԱՃԹՆ-ի կայքում ներկայացվող տվյալները պետք է ունենան վերաօգտագործման հնարավորություն և տեղադրվեն xls ու csv ֆորմատներով:

Որոշվեց, որ xls ու csv ֆորմատներով տեղեկատվությունը զետեղելուց բացի, տվյալները տեղադրել նաև doc ֆորմատով:

ԱՃԹՆ-ի բաց տվյալների քաղաքականության հայեցակարգի նախագիծը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

7. Նախնական ուսումնասիրության, հանրային հաղորդակցության ռազմավարության և օրենսդրական դաշտի ուսումնասիրության հետ կապված խնդիրների ներկայացում և քննարկում

Կ. Ուլբրիխտը, Դ. Հակոբյանը և Լ. Մուրադյանը ներկայացրին նախնական ուսումնասիրության, հանրային հաղորդակցության ռազմավարության և օրենսդրական դաշտի ուսումնասիրության հետ կապված խնդիրները:

Որոշվեց՝ վերոնշյալ նախագծերի ներկայացման հետևյալ վերջնաժամկետները.

- նախնական ուսումնասիրության վերջնական նախագիծ՝ դեկտեմբերի 11,
- հանրային հաղորդակցության ռազմավարության նախագիծ՝ դեկտեմբերի 19,
- օրենսդրական դաշտի ուսումնասիրության նախագիծ՝ դեկտեմբերի 11:

Հիշեցվեց նաև, որ անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագծի մշակման, ինչպես նաև տեխնիկական առաջադրանքներում ընդգրկված այլ խնդիրների ուղղությամբ:

Նշվեց, որ պատասխանատու հանքարդյունաբերության միջազգային փորձի ուսումնասիրությունը և ինստիտուցիոնալ-օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ առաջարկները դուրս են մնում ՀԱՀ ՊՀԿ աշխատանքներից: **Պատասխան տրվեց,** որ ՀԱՀ ՊՀԿ-ի աշխատանքներից այդ հատվածը դուրս չի մնում, և ՀԱՀ ՊՀԿ-ն պետք է մշակի նախնական ճանապարհային քարտեզ, որը հետագայում կարող է լրամշակվել: **Նշվեց,** որ ԲՇԽ-ի աշխատանքային խմբերը, որպես այդիպիսին, չեն կայացել: **Առաջարկվեց՝** սպասել ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից մշակված նյութերին, այնուհետև կայացնել որոշում:

8. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի նախագծի և իրական սեփականատիրոջ սահմանման քննարկում

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը պետք է հրապարակվի Հայաստանի Հանրապետության մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործող կազմակերպությունների իրական սեփականատերերի

բացահայտման ճանապարհային քարտեզը: Քարտեզի մշակման աշխատանքներին Հայաստանի Հանրապետությանը օժանդակություն է ցուցաբերել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, որի շնորհիվ միջազգային և տեղական խորհրդատուներ Ջերեմի Ուիթն ու Դավիթ Սարգսյանը, համագործակցելով ԲՇԽ-ի, Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության և այլ շահագրգիռ կողմերի հետ, ներկայացրել են իրավական դաշտի ուսումնասիրություն և իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի և ժամանակացույցի, այդ թվում՝ իրական սեփականատիրոջ սահմանման նախագծերը: Նիստին իրական սեփականատերերի բացահայտման հարցերով խորհրդատու **Դ. Սարգսյանը** ներկայացրեց կատարված աշխատանքները: **Առաջարկվեց՝** քննարկել իրական սեփականատիրոջ սահմանման նախագիծը և համաձայնության գալ մի շարք դրույթների վերաբերյալ: Նշվեց, որ Հայաստանի Հանրապետությունում առկա է բավական մեծ փորձ, հատկապես բանկային ոլորտում, որը վերաբերում է իրական շահառուի բացահայտմանը: Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրությունը նույպես սահմանում է իրական շահառուի բացահայտման պահանջ, որը հիմնված է միջազգային ստանդարտների վրա: Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական ակտերում նույնպես առկա է ընդերքօգտագործման թույլտվության հայտ ներկայացնող կազմակերպությունների համար 10 տոկոսից ավելի բաժնետերերի բացայատման առաջնային պահանջ, որը, սակայն, չի պահանջում ֆիզիկական անձի՝ որպես վերջնական սեփականատիրոջ բացահայտում: Իրավաբանական անձի սկզբնական գրանցման ժամանակ նույնպես սահմանված են բաժնետերերի բացահայտման պահանջներ: Իրական սեփականատիրոջ առաջարկվող սահմանման մեջ ամենակարևոր հարցերից է բացահայատման շեմի որոշումը: Խորհրդատուն ներկայացրեց, որ նախագծով առաջարկվել է 20 տոկոս շեմ, քանի որ Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես, հանքարդյունաբերության ոլորտում սովորաբար 20 տոկոսից բարձր սեփականատիրության դեպքում է, որ սեփականատերը ունենում է որոշումների կայացման վրա ազդեցություն: 20 տոկոսից ցածր սեփականության դեպքում սեփականատերը սովորաբար պասիվ ներդրող է և որոշումների կայացման վրա ազդեցություն չի ունենում: Անուղղակի կերպով տիրապետման կամ հսկողության պարագայում՝ պայմանագրային հարաբերությունների հիման վրա կամ այլ կերպ շահույթին տնօրինելու դեպքերում առաջարկվել է բացահայտման համար 15 տոկոս շեմի

սահմանում: Ըստ նախագծի՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձինք պետք է բացահայտվեն՝ անկախ մասնակցության չափից: Քննարկումների արդյունքում **առաջարկվեց՝** չփոփոխել գործող օրենսդրության պահանջները և սահմանել իրական սեփականատիրոջ բացահայատման 10 տոկոս շեմ, որը կապահովի առավել բարձր թափանցիկություն: Թեև նշվեց, որ առկա 10 տոկոս շեմը պարտադիր չի վերաբերում ֆիզիկական անձանց, և դրանով իսկ 10 տոկոսի սահմանումը նշանակում է առկա պահանջի խստացում: ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ **ընդունեց** առաջարկությունը:

Հարց բարձրացվեց, թե սկզբնական շրջանում ինչ շրջանակում է իրականացվելու իրական սեփականատերերի բացահայտումը: Առաջարկվեց, որ 2020 թվականից բացահայտվեն Հայաստանի Հանրապետությունում մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած կազմակերպությունների իրական սեփականատերերը: Նշվեց, որ, եթե գործընթացը հաջող ընթանա, ապա այդ փորձը կարող է օգտագործվել նաև այլ ոլորտներում: **Առաջարկվեց՝** քննարկել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստացած կազմակերպությունների ընդգրկման հարցը, քանի որ այս ենթաոլորտը նույնպես գտնվում է քաղաքացիական հասարակության ուշադրության կենտրոնում: Ի պատասխան նշվեց, որ առավել կարևոր է այն կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտումը, որոնք ոլորտում օգտակար հանածոների արդյունահանումից շահույթ են ստանում: Ուսումնասիրության թույլտվություն ստացած իրավաբանական անձինք իրենց գործունեության արդյունքում շահույթ չեն ստանում, միայն կատարում են ներդրումներ (ծախսեր): Ամեն դեպքում, երբ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստացած կազմակերպությունը հայտ կներկայացնի մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստանալու համար, այս դեպքում այն պարտադիր կերպով ստիպված կլինի բացահայտել իր իրական սեփականատերերին: Կարծիք հայտնվեց, որ ռիսկեր գոյություն ունեն նաև ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունների դեպքում և ճանապարհային քարտեզում անհրաժեշտ է անդրադարձ կատարել այս թույլտվությունների տիրապետողներին: Տեղեկացվեց նաև, որ համաձայն երկրում իրականացվող բարեփոխումների, 2020-2024 թվականներին իրավաբանական անձանց պետական գրացման ռեգիստրի հարթակի հիման վրա բոլոր ոլորտներում

պետք է իրականացվի սեփականատերերի բացահայտում: Բազմաշահառու խմբի քննարկման արդյունքում **որոշվեց,** որ սկզբնական շրջանում (2020 թվականին) բացահայտվելու են մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած կազմակերպությունների իրական սեփականատերերը, իսկ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի նախագծում պետք է ներառել միջոցառում, ըստ որի ԲՇԽ-ն կիրականացնի քննարկում կամ ուսումնասիրություն, որի արդյունքում կորոշվեն իրական սեփականատերերի բացահայտման շրջանակի ընդլայնման, այլ ենթաոլորտների ներառման հարցերը և ժամանակացույցը:

Որոշվեց նաև՝ իրական սեփականատերերի կամավոր բացահայտումը չներառել ԱՃԹՆ-ի 1-ին և 2-րդ թվականներին հրապարակվելիք զեկույցներում: Որպես հիմնավորում նշվեց մի քանի պատճառ. միջազգային փորձը ցույց է տալիս, որ կամավոր բացահայտման գործընթացը ԱՃԹՆ-ի զեկույցներում այն իրականացնող երկրներում արդյունավետ չի եղել, Հայաստանի 1-ին զեկույցի կազմման համար սահմանված են սահմանափակ ժամկետներ, իսկ 2019 զեկույցում կամավոր բացահայտման պարագայում կազմակերպությունները ստիպված կլինեն 2 անգամ ներկայացնել հայտարարագրեր՝ կամավոր՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար, այնուհետև, մի քանի ամիս անց, պարտադիր՝ 2020թ. իրավաբանական անձանց ռեգիստրում հրապարակման համար: Այս գործընթացը կարող է ավելացնել գործարարների ծախսային բեռը, ինչպես նաև ժամանակ չի լինի դասեր քաղելու և համակարգում շտկումներ կատարելու համար:

Քննարկված հարցերի հետ կապված, որոշվեց լրամշակել իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի և իրական սեփականատիրոջ սահմանման նախագծերը՝ համաձայն կայացված որոշումների, և այն առաջիկա շաբաթվա ընթացքում ներկայացնել ԲՇԽ-ի խմբակցությունների կարծիքի: